ՀՐԱՉՅԱ ԲԵԳԼԱՐՅԱՆ

ԳԵՏԵՐԸ ՉԵՆ ՀՈԳՆՈՒՄ

ՀՐԱՉՅԱ ԲԵԳԼԱՐՅԱՆ

ԳԵՏԵՐԸ ՉԵՆ ՀՈԳՆՈՒՄ

Ա 16999

ԵՐԵՎԱՆ . «ՀԱՅԱՍՏԱՆ» . 1981

С(Арм)2
Б 35

«Գետերը չեն հոգնում» ժողովածուն բանաստեղծ Հրաչյա Բեգլարյանի թվով վեցերորդ գիրքն է։ Նրանում տեղ են գտել հեղինակի վերջին տարիների գրած լավագույն բանաստեղծությունները։

Բանաստեղծությունների հիմնական թեմաներն են հողի և տիեզերքի հերոսները, սովետական մարդու ազնիվ զգացումները, նվիրական սերը, ժողովուրդների բարեկամությունը, հայրենասիրությունն ու խաղաղությունը։

Հրաչյա Բեգլարյանի պոեզիայի համար բնորոշ են լիրիկական ջերմությունն ու պատկերային մտածողությունը։ Նրա բանաստեղծությունները գրված են անկեղծ ներշնչումով, հուզիչ են և, ամենից կարևորը՝ շնչում են ժամանակի ոգով։

Գիրքը կազմված է «Ղարաբաղյան նվագներ», «Իմ հարկի տակ», «Սեր և գարուն», «Ծղրայրու թյան ծիածան» ենթաբաժիններից։

Б $\frac{70403 - 137}{М—656—81}$ 120—81

С(Арм)2

© «Язычы», 1981.

Զինվորների պես
Նաև միշտ զգույշ,
Միշտ զգաստ անցեմ,
Որ հաղթանակի
Մայիսն այս հզոր՝
Արյունով խլած
Մայիսն այս բոսոր,
Միշտ գարուն տանի,
Բարի լուր տանի,
Խնդություն տանի
Աշխարհին, մարդկանց,
Որ մեր արտերում
Էլ խրամատներ,
Վերքեր չբացեն
Արկերը մահվան,
Որ հաղթանակի
Մեր այս մայիսը,
Մեր բախտի կանաչ,
Կարմիր ամիսը,
Մեր հաղթանակի
Դրոշը կարմիր,
Այս մոլորակի
Բոլոր կողմերում
Միշտ բարձր պահի...

ԿՈՄԻՏԱՍԻՆ

Քո երգերում՝ անհայտ կորած
Որդու ցավն է մայրը լալիս,
Ձեռը ծոցում, ցավը նորած՝
Պանդուխտ այրը տուն չի գալիս:

Ամռան գիշեր, Շողերն անուշ
Քուն է մտել երեսը բաց,
Թուխ մազերն է շոյում քնքուշ,
Դաշտի ճովը՝ սիրուց արբած:

Քարափի տակ մի ջրաղաց
Վաղուց էլ չի աղում հատիկ,
Աղջիկները բանջար քաղած՝
Տուն են դառնում ոտաբոբիկ...

Ինչքան մորմոք, ինչքան բողոք,
Կրակներ կան քո երգերում,
Անտունիներ, որ անողոք
Մորմոքում են ու դեգերում:

Ու դեռ քանի, ա՜խ, դեռ քանի
Սրտեր պիտի վառես, անգին.
Քո երգերը՝ մի հինավուրց
Ժողովրդի ճակատագիր...

ՄԱՇՏՈՑՅԱՆ ԳՐԵՐ

Ամեն տարը՝
Լույսի կանթեղ,
Ամեն տարը՝
Ձիներոր զորեղ,
Ամեն տարը՝
Մի բանալի,
Իմաստությամբ
Ու երգով լի,
Որ ստեղծեց